

**ՀՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ**

09 օգոստոսի 2008թ.

Կից Ձեզ է ուղարկվում 2008 թվականի օգոստոսի 5-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ կայացած խորհրդակցության արդյունքում կազմված առևտրի իրականացման վայրերում (շուկաներում) իրականացվելիք հարկային վարչարարության միջոցառումների ցանկը, ինչպես նաև երկու “իրազեկման թերթեր” առևտրի իրականացման վայրի կազմակերպիչների և առևտրի իրականացման վայրերում առևտուր իրականացնողների համար:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ վարչապետի մոտ կայացած խորհրդակցությանը մասնակցել են երկու տասնյակից ավելի, առավել խոշոր տոնավաճառների, շուկաների, առևտրի կենտրոնների ներկայացուցիչներ (սեփականատերեր, տնօրեններ, այլ մասնագետներ): Հարկային ծառայությունը պատասխանատու է լինելու տրված հանձնարարականների կատարման համար:

Ք. Նուրիջանյան

**ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ (ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ) ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ
ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՑԱՆԿ**

1. ՀՀ կառավարությունը ՀՀ Ազգային ժողով է ներկայացնելու օրենքների նախագծերի փաթեթ, որով նախատեսվում է սահմանել առևտրի իրականացման վայրի՝ շուկաների կազմակերպման լիցենզավորման նոր պահանջներ:

Լիցենզավորման պարտադիր պահանջներն են՝

- ա) շուկաներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների (խանութ, կրպակներ, տաղավարներ) կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների ներդրման ապահովումը: Այսինքն ՀԴՄ-ի տեղադրման պատասխանատու են շուկաների կազմակերպիչները: Ընդ որում շուկայում սեղադրվող ՀԴՄ-ները պետք է միացված լինեն միմյանց հետ, մեկ համակարգչային ցանցում և տվյալների տրամադրումը հարկային մարմիններին պետք է կատարվի այդ ցանցի միջոցով օրական կտրվածքով: Սա ենթադրում է, որ ավելացված արժեքի հարկի վճարումը նույնպես իրականացվելու է օրական կտրվածքով:
- բ) սահմանվում է շուկայի և տնտեսվարող սուբյեկտների միջև կնքվող պայմանագրի տիպային ձև, որը կնախատեսի հետևյալ վավերապայմանների առկայությունը՝ ՀՎՀՀ համարը, պայմանագրի ժամկետը, վաճառատեղի հերթական համարը, հատկացվող տարածքի մակերեսը, վարձի չափը և այլն:
- գ) արգելվում է պահեստներից ապրանքների մատակարարման ժամանակ ՀԴՄ ների կիրառումը և ընդհանրապես ՀԴՄ-ների տեղադրումը պահեստային տարածքներում:
- դ) խստացվելու են ՀԴՄ-ների կիրառման խախտումների նկատմամբ պատասխանատվության միջոցները, ընդ որում պատասխանատվությունը կրելու են շուկայի կազմակերպիչները:

2. Մինչև այդ նշված օրենսդրական նախաձեռնությունն ուժի մեջ մտնելը հարկային մարմինները հետամուտ են լինելու շուն.աների կազմակերպիչների կողմից մի շարք պայմանների և պահանջների կատարման յկատմամբ վերահսկողության իրականացմանը: Շուկաների կազմակերպիչները պարտավոր են

- ա) բացառել հարկային մարմնում չհաշվառված տնտեսվարող սուբյեկտներին վաճառատեղեր տրամադրելը: Շուկաների կազմակերպիչները պարտավոր են բացառել նաև հաշվառված սուբյեկտներին վաճառատեղի տրամադրումն առանց պայմանագրի: Առանց պայմանագիր կնքելու՝ վաճառատեղի տրամադրման համար կիրառվելու են պատասխանատվության միջոցներ 100-300 հազ. դրամի չափով, յուրաքանչյուր նման չգրանցված վաճառատեղի համար:
- բ) ապահովել շուկաների բոլոր վաճառատեղերում ՀԴՄ-ների առկայությունը *սեպտեմբերի 1-ից*:
- գ) ՀԴՄ-ների տեղադրման պահանջ և համար շուկաների կազմակերպիչները պետք է տեղեկացնեն տնտեսվարող սուբյեկտներին .առավելագույնը մինչև 2008 թվականի *օգոստոսի 15-ը*:
- դ) *Մինչև օգոստոսի 15-ը* շուկաների կազմակերպիչները պարտավոր են տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված իրենց պայմանագրերը վերանայել՝ արտացոլելով այդ պայմանագրերում տրամադրված վաճառատեղերի իրական մակերեսը և տրամադրել հարկային մարմինն թարմացված տեղեկատվություն:
- ե) շուկաների կազմակերպիչներ և պետք է սկսեն նախապատրաստական աշխատանքներ, որպեսզի մինչև 2008 թվականի *հոկտեմբերի 1-ը* ապահովեն իրենց մոտ վարձակալող տարածքներում ՀԴՄ-ների միջև համակարգչային ցանցի ստեղծումը: